

Զ.

Վահմավայլ Տ. Պօղոս Նուբար վաչան Փարիզի Միջազգային
ժողովում նկրկայացրել է Հայաստանի միմիայն վեց լիլայէթների
հայ ազգաբնակութեան թիւը 1,018,000 *).

Թթրասէր պրոֆ. Վանբերին (Deutsche Rundschau, Februar
1896) հայերի թիւը Տաճկաստանում հաշւում է 1,130,000:

Կինչը իւր (ՂԱՐՄԵՆԻ) գրքում հաշուած է հայերի թիւը
1,058,000:

Այսպիսով կարելի է ասել, որ Ասիական և Եւրոպական թիւր-
քիայում հայերի թիւը կարող է լինել մինչև $2\frac{1}{2}$ միլիան:

Ա. Գ. Ա.

Պ Բ Ե Ս Ա Ն Ա Ր

Հեռագիրը գումաց, որ յունուարի 7-ի գիշելը վախ-
ճանուել է ֆրանսիական ազգի ամենաշոյակապ դեմքերից
մէկը՝ Ֆրանսօսի դը Պրեսսանսէն: Նրա հայ ազգին մատու-
ցած ծառայութիւններն այնքան նշանակալից են, որ մենք
կարեւոր համարեցինք գէթ երկու խօսքով ընթերցողներին
ծանօթացնել այդ ազնիւ և վեհ ծերունու կեանքին:

Պրեսսանսէն ծնուել է 1853 թ. սեպտեմբերի 30-ին
Փարիզում: Նրա ծնողները եղել են կրթուած և հասա-
րակական գործիչներ: Նա իր ամբողջ կեանքը, իր միտքն
ու գրիչը կենելուածների եւ տառապող փոքրիկ ժողո-
վուրդներին է նուիրում: Սարել, զործել եւ մեռնել շա-
հազործող մարդկութեան, տանջուղ մանր ազգերի համար,
ահա այն մեծ զաղախարք, որ Դրէյֆուսի դատի բնրաց-
գում համակեց մրանիսի դը Պրեսսանսէի էութիւնը: Պրե-
սսանսէի գործունէութեան ամենաքեզուն շրջանը նրա կեան-
քի վերջին տասնամեակն էր—1902—1912 թ. 1912-ից
նա Մարդկանց իրաւունքի Պատմական Միութեան անդամ
է լինուած և շուտով էլ այդ միութեան նախազահ է ըն-

*.) Տես Արարատ 1914 թիւ Ա. էջ 49:

տրւումի Միաժամանակ ֆրանսիական պարլամենտի անդամ էր, որտեղ նա շատ անգամ իր հուժկու ձայնն էր հնչեցնում բոլոր ճնշուածների արդար դատի համար։ 1894—5 թուերի Հայկական ջարդերը Եւրոպայում դիպումատիական շրջաններում մեծ իրարանցում են առաջ բերում։ Եւրոպան հետաքրքրւում է հայ ժողովրդով և Հայաստան երկրով։ Մի խումբ հայ երիտասարդների ջանքերի շնորհիւ յաջողւում է Եւրոպայում Հայաստիների մի խմբակ կազմել, որոնց մէջ պատուաւոր տեղ են ըլունում Պրեսանսէն և մեր դատի միւս անխոնջ պաշտպան Պիեռ Քիայառ։ Որպէսզի հայ դատի համար պրօպագանդան ուժեղ լինի՝ հիմնւում է «Pro-Armenia» թերթը, որի խմբագիրներն ու գլխաւոր աշխատակիցները Պրեսանսէն և Քիայառն են լինում։ Այստեղից արդէն Պրեսանսէն կապւում է հայ ժողովրդի հետ շատ սերտ կերպով։ մենք տեսնում ենք նրան ամեն ժամանակ, յարմար պարագայում։ թէ ինչպէս դիմում է Եւրոպայի խոհճին, մեր ջարչարանքներն ու տառապանքների զարհութելի տեսարաններն է Եւրոպայի առաջ զնում։ 1905 թուին Ռասունի ջարդերի առթիւ էր, որ Պրեսանսէն Ֆրանսիայի պարլամենտի ամրիոնից զգուշացնում էր Ֆրանսիային և Եւրոպային, որպէս զի նոքա 95—96-ի սխալների մէջ չընկնեն և մարտիրոսացած մի ժողովրդի թոյլ չտան կարմիր Ռուլթանի ոճրագործութեանց զոհը դառնալ։ Անցեալ տարի հայկական հարցի նոր փուլի մէջ մտնելու առթիւ՝ նադարձեալ հանգեստ եկաւ հայասէր Վիկտոր Բերարի հետ պաշտպանելու հայկական դատը։ Դադարած «Pro Armenia» նորից ոկոսւեց հրատարակուել և Պրեսանսէն այդ թերթի իւրաքանչիւր համարում լեցնում էր զեղուն յօղուածներ։

Նա չքացաւ Ֆրանսիայի հորիզոնից։ Նրա թաղմանը ներկայ է լինում հաղարաւոր ժողովուրդ, Ֆրանսիայի ամրող մտաւորական դասը, Ֆրանսիական պարլամենտի բոլոր ազատամիտ պատգամաւորները ելն։ Հայ զաղութն էլ իր մասնակցութիւնն է ունեցել, հայ ուսանողները զե-

ղեցիկ միտք են յդացել — Պրեսանսէի դագաղը ուսերին
առած հողին յանձնել, (այս սովորութիւնը ֆրանսիայում
գոյութիւն չունի): Պատիներ են եղել՝ Պօղոս-փաշայից,
ֆրանսիայի հայ գաղութից, խմբակցութիւններից և լն:
թաղման թափօրին, բացի ուսանողներից ներկայ էին բազ-
մաթիւ հայեր, հոգեոր հովիւ Տէր Վառաշապուհ քահա-
նան, Պօղոս Նուբար փաշան, գօքտ. Լորիս Մելիքեանը և լն:
Յարդանք Պրեսանսէի, այդ մարդասէր և բարի ծե-
րունութարմ յիշատակին:

Մ. Ա.

ԲԺՇԿԱՊԵՏ Ա.Ի.Ե.ՏԻՔ ԲԱ.Բ.Ա.ՅԵԱՆԻ ՄԱ.ՀՈՒՅԱՆ Ա.Ո.ԹԻՒ

Անցեալ զեկտեմբեր 25-ին Պարիզում վախճանուեց
հայ հասարակութեան յայտնի բժկ. Աւետիք Ռարայեանը
70 տարեկան հասակում: Նա բնիկ Ալէքսանդրապոլցի է,
իւր բարձրագոյն ուսումը ստացել է Պետերբուրգի զինուու-
րական-բժշկական ճեմարանում: Եղել է զինուուրական ծա-
ռայութեան մէջ, մասնակցել է ուսու-թիւրքական պատե-
րազմում: և ապա զինուուրական բժշկի պաշտօնով երկար
ժամանակ եղել է Արասթումանում և թիվլիսում: Վերջերս
մասնաւոր կերպով բժշկութիւն էր անում թիվլիսում և
հանքային ջրերում՝ ամառները: Նա համարւում էր
60-ական թոււականների հարազատ զաւակներից և իւր
սրտացաւ գործունէութեամբ միշտ օգտակար է եղել հա-
յութեան զանազան գործերում: Նա թողել է բաւականին
ձեռագիր կարեոր աշխատանքներ, մանաւանդ բժշկական
խնդիրների վերաբերեալ, իոկ տպագրուածներից ազքի են
ընկնում նորա հետեւեալ աշխատանքները:

1) «Ռւսումնարանների առողջապահութեան հարցեր»,
1881թ.

2) «Մանկապարտէզների կամ Ֆրեօրելեան ծաղկանցի
առողջապահութիւնը» 1882թ.

3) Արդի ուղղութիւն առողջապահութեան և բժշ-
կականութեան մէջ, 1886թ.

1813

70

43

69

43

26